ԿԻԼԻԿԻԱՆ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ 1915 Թ.

ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ

1914 թ. օգոստոսի 1-ին բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Մեծ ու փոքր տասնյակ պետություններ խառնվեցին գրեթե ամբողջ աշխարհին ընդգրկած պատերազմական իրարանցումին՝ նպատակ ունենալով իրականացնել իրենց ազգային և պետական իդեալները: Երիտթուրքական կառավարությունը, օգտվելով առիթից, չեղյալ հայտարարեց հայկական բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում ստորագրված ռուս-թուրքական համաձայնագիրը և սկսեց նախապատրաստվել լուծելու Հայկական հարցը թուրքական եղանակով՝ բնաջնջելով հայ ժողովրդին իր իսկ բնօրրանում:

Պատերազմը հայ ժողովրդի մեջ հույսեր արթնացրեց, որ վերջնականապես կազատագրվեն թուրքական բռնապետությունից: 1914 թ. նոյեմբերի 8-ին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին ուղարկած նամակում Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսը ակնկալություն էր հայտնում, որ Ռուսաստանը ինքնավարություն կշնորհի Հայաստանին՝ վեց վիլայեթների և Կիլիկիայի սահմաններում[1]: Նույն խնդրանքով կաթողիկոսը դիմեց նաև Նիկոլայ II-ին, երբ 1914 թ. նոյեմբերի 29-ին Թիֆլիսում արժանացավ նրա ընդունելությանը: Ցարը պատասխանեց, որ «Հայկական հարցը հայերի սպասելիքների համեմատ կլուծվի պատերազմի ավարտից հետո, հաշտության բանակցությունների ժամանակ»[2]: Ցարի անորոշ պատասխանը մեծ ոգևորությամբ ընդունվեց հայ քաղաքական շրջանակների կողմից. թվում էր, թե ցարական կառավարությունը մտադիր է լուծել Հայկական հարցը: Դրանով էր պայմանավորված այն մեծ խանդավառությունը, որով կազմակերպվեցին հայկական կամավորական գնդերը Կովկասում:

Եթե Արևմտյան Հայաստանի գրավումը ռուսական բանակի կողմից հնարավոր էր համարվում, ապա Կիլիկիան հեռու էր Կովկասյան ռազմաճակատից, և տեղի հայությանը թուրքական կոտորածներից փրկելու համար հայ գործիչները ստիպված էին այլ ելք որոնել: Լավագույն տարբերակը Կիլիկիայում անգլիական կամ ֆրանսիական զորքերի ափհանումն էր և նրանց օգնությամբ երկրամասը թուրքերից ազատելը: Տեղի հայերն իրենց հերթին պատրաստակամ էին կռվելու Անտանտի բանակների կողքին: Կիլիկիայում հայկական ապստամբությունը և դաշնակիցների օգնությամբ ազատագրումը հնարավորություն կտար երկրամասը փրկել հայազրկումից, ինչպես նաև պայմաններ կստեղծեր պատերազմից հե-

---

[1] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна. Ереван, 1983, с. 275-276.

[2] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, խմբագիր Ջ. Կիրակոսյան, Երևան, 1972, էջ 372:*

տո ինքնավարություն ձեռք բերելու համար: Կիլիկիայի ազատագրումով հնարավոր կդառնար կանխել հայերի տեղահանությունն ու կոտորածը նաև մյուս վայրերում, որի հետևանքով թուրքերը ի վիճակի չէին լինի իրականացնել Հայոց մեծ եղեռնն իր ամբողջ ահավորությամբ:

Կիլիկիայում ափհանում կատարելու նպատակով հայ գործիչները 1914 թ. վերջերից սկսած բազմիցս դիմեցին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ղեկավար շրջանակներին: Այդ հարցով զբաղվող առաջին գործիչներից էր Պողոս Նուբար փաշան՝ 1912 թ. ստեղծված Հայ ազգային պատվիրակության նախագահը: Նրան անհանգստացնում էր Կիլիկիայի հայ բնակչության ճակատագիրը՝ ջարդերի սպառնացող վտանգը, քանի որ ռուսական բանակը նրանց օգնության հասնել չէր կարող: Կիլիկիահայությանը փրկելու մտահոգությամբ Պ. Նուբարը 1914 թ. նոյեմբերի սկզբին դիմեց Եգիպտոսի անգլիական հրամանատարությանը, որպեսզի զորք ուղարկեն գրավելու Կիլիկիայի ծովեզերքը՝ Մերսինի ու Ալեքսանդրետի նավահանգիստները, Ադանայի դաշտը: Նա խոստացավ, որ լեռնագավառների հայերը կապստամբեն և կօժանդակեն դաշնակիցներին, եթե նրանց զենք ու զինամթերք տրամադրվի: Անգլիական ուժերի ափհանումը կապահովեր տեղի հայության անվտանգությունը, իսկ հայկական ապստամբական շարժումը «ավելի կշիռ կը բերեր Կիլիկիո մասին մեր ունեցած ազգային բաղձանքներուն»[3],– գրում էր նա կաթողիկոսին ուղարկած նամակում:

Այդ ծրագիրը հավանություն ստացավ անգլիացիների կողմից: Եգիպտոսում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ջոն Մաքսվելը Պ. Նուբարի հետ քննարկեց զորքերի ափհանման և հայերի աջակցության հետ կապված հարցերը: Հայ գործիչը վստահեցրեց, որ հայերն անգլիացիներին կընդունեն որպես ազատարարների և ցույց կտան ամեն հնարավոր օգնություն:

1915 թ. փետրվարի 3-ին Պ. Նուբարը «Պատերազմը և Կիլիկիայի հայերը» վերնագրով հուշագիր[4] ներկայացրեց Եգիպտոսի անգլիական իշխանություններին: Նա նշում էր, որ Հայաստանի հետ պետք է ինքնավարություն ստանա նաև Կիլիկիան կամ պետք է անցնի Դաշնակից երկրներից որևէ մեկին: Խոստանում էր, որ կիլիկիահայերը կաջակցեն անգլիական էքսպեդիցիային և նույնիսկ ապստամբություն կբարձրացնեն լեռնագավառներում, եթե զենք ստանան: Հիշեցնում էր, որ 1895–1896 թթ. ապստամբության ժամանակ Զեյթունը մի քանի ամիս շարունակ հաջողությամբ դիմագրավել էր թուրքական բանակին, և հայերն աչքի էին ընկել բարձր մարտունակությամբ: 1915 թ. ապրիլին Կիլիկիայի Սահակ Բ կաթողիկոսին հասցեագրած նամակում Պ. Նուբարը նշում էր, որ, ունենալով Կովկասի և ֆրանսիական բանակի հայ կամավորների օրինակը, ինքը մտածում է, որ հայերի պարտականությունն է լինելու դաշնակիցներին բոլոր հնարավոր միջոցներով աջակցելը, եթե նրանց էքսպեդիցիան ափ իջնի Կիլիկիայում[5]:

---

[3] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 68:*

[4] Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915–1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, p. 3-5.

[5] *Նույն տեղում, էջ 14-16:*

1915 թ. հունվարի 2-ին Ռուսաստանի գերագույն գլխավոր հրամանատար Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչը դիմեց Անգլիային՝ խնդրելով Մերձավոր Արևելքում ռազմական գործողություններ սկսել, որպեսզի թուլացնեն թուրքական բանակի ճնշումը Կովկասյան ճակատի ռուսական բանակների վրա[6]: Անգլիական կառավարությունը 1915 թ. հունվարին քննարկեց Թուրքիային հզոր հարված հասցնելու երկու ուղղություն. ռազմական նախարար Հ. Քիթչեները համոզված էր, որ պետք է հարվածել Կիլիկիայի ուղղությամբ, իսկ ֆինանսների նախարար Լլոյդ Ջորջը և հատկապես ռազմածովային նախարար Ու. Չերչիլն առաջարկում էին հարձակվել Դարդանելի վրա ու գրավել մայրաքաղաք Կ. Պոլիսը: Հ. Քիթչեներն առաջարկում էր ափհանում կատարել Ալեքսանդրետի ծոցում, ներխուժել Անտիոքի դաշտ և շարժվելով հյուսիս-արևելք՝ Դիարբեքիրի կամ Վանի վիլայեթներում միանալ ռուսական բանակին[7]: Դրանով Թուրքիան կբաժանվեր երկու մասի, և հեշտությամբ կգրավվեր դաշնակիցների կողմից: Ի վերջո, անգլիական իշխանությունները որոշեցին ափհանում կատարել Դարդանելում, և Կիլիկիան անուշադրության մատնվեց: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, դա ռազմավարական լուրջ սխալ էր, որի հետևանքով անգլիացիները ծանր պարտություն կրեցին և մեծ զոհեր տվեցին, իսկ Կիլիկիան դատապարտվեց հայաթափման:

Երբ անգլիացիները որոշեցին հարձակվել Կ. Պոլսի ուղղությամբ, Պ. Նուբարից պահանջեցին, որ եգիպտահայերի կամավորագրություն և այդ նպատակով հանգանակություն չկազմակերպեն, քանի որ դա կարող էր գրգռել տեղի մահմեդականներին և ապստամբության պատճառ դառնալ[8]: Ազգային գործիչը ստիպված էր բավարարվել միայն Կովկաս ուղարկվող օգնությամբ: Մինչև 1915 թ. մարտը նա 6.000 ոսկի ուղարկեց Թիֆլիս և Էջմիածին՝ գաղթականներին ու կամավորներին օգնելու համար: Մարտի 15-ին նա շրջաբերական հրապարակեց՝ «Ազգային շահերու պաշտպանության» հանգանակություն սկսելու վերաբերյալ[9]: Մինչև հունիս Եգիպտոսում, Ամերիկայում ու Եվրոպայում հանգանակվեց 7.000 ոսկի, որը գլխավորապես օգտագործվեց կամավորների և արևմտահայ գաղթականության կարիքների համար[10]:

Հայկական կոտորածների մասին լուրերի ահագնանալու հետ հայ գործիչներն ավելի էին հակվում Կիլիկիայում զինված գործողություններ ծավալելու մտքին: Պ. Նուբարը համոզված էր, որ Կիլիկիայում անհրաժեշտ է զենքի դիմել նույնիսկ եթե դաշնակիցները օգնել չկարողանային: «Այսուամենայնիվ, եթե սպասեմք, որ Պոլիսը իյնա և անկե հետո դաշնակիցները Կիլիկյան ծովեզերքը զորք հանեն,– հուլիսի 27-ին գրում էր նա Ամենայն հայոց կաթողիկոսին,– մինչև այն ատեն Կիլիկիո մեջ գուցե բնավ հայ չի մնար. որպի՛սի անդարմանելի չարիք:

---

[6] *Վ. Տ ր ո ւ խ ա ն ո վ ս կ ի. Ուինստոն Չերչիլ: Քաղաքական կենսագրություն, Երևան, 1972, էջ 191:*

[7] *Գ. Ա հ ա ր ո ն յ ա ն. Մեծ երազի ճամփուն վրա (Ակնարկ Հայկական հարցի պատմության վրա), Լոս Անջելես, 1986, էջ 61-62:*

[8] Boghos Nubar's Papers…, p. 10.

[9] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թ. 16:*

[10] *Նույն տեղում, գ. 19, թ. 85:*

Ապա ուրեմն մեզ համար մահու և կենաց հարց է ոնէ գնով արգիլել Կիլիկիո հայության կոտորածներն ու խմբական աքսորանքը»[11]: Ազգային գործիչը հարցի լուծման տարբերակ էր համարում Կովկասյան բանակի հայ կամավորական գնդերի թվի մեծացումը և արագ երթով Կիլիկիա հասնելը: Բայց դա անհնար էր իրականացնել, քանի որ հայ կամավորների թիվը փոքր էր նման գործողության համար, իսկ թուրքերը դեռևս բավարար ուժեր ունեին նույնիսկ Կովկասյան ռուսական բանակի առաջխաղացումը կասեցնելու համար:

1915 թ. հուլիսին եգիպտահայերը կրկին բարձրացրին հայկական կամավորական զորամաս կազմավորելու հարցը, որը հարմար առիթի դեպքում ներխուժելու էր Կիլիկիա: Նախատեսվում էր Եգիպտոսում կամավորագրել 1.000 հայերի, նրանց միացնել Ամերիկայից ու Եվրոպայից եկած կամավորներին, ինչպես նաև Ֆրանսիայի Օտար լեգեոնի հայ մարտիկներին: Զենք, զինամթերք և սպաներ պետք է տրամադրեին Անտանտի երկրները[12]: Հուլիսի 20-ին Եգիպտոսի Հայ ազգային պաշտպանության կոմիտեն հուշագիր ներկայացրեց երկրում անգլիական զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ջ. Մաքսվելին՝ առաջարկելով Կիպրոսում կենտրոնացնել հայ կամավորների և այնտեղից ռազմական գործողություններ սկսել Կիլիկիայի ուղղությամբ, որի շնորհիվ տեղի հայությունը կփրկվեր կոտորածներից, իսկ թուրքերի հաղորդակցության ուղիները կխափանվեին[13]: Առաջարկությունը հետաքրքրեց անգլիացիներին, քանի որ արդեն պարզ էր Դարդանելի օպերացիայի ձախողումը, և իրենց հեղինակությունն Արևելքում պահպանելու համար նրանք նոր ուղիներ էին փնտրում: Ջ. Մաքսվելի պահանջով Հայ ազգային պաշտպանության կոմիտեն հուլիսի 24-ին ավելի մանրամասն ծրագիր ներկայացրեց[14]: Ըստ դրա, Կիպրոսում կազմավորվելու էր 10.000-նոց հայկական կամավորական զորամաս, որի ծախսերը հոգալու էին հայերը, իսկ անգլիացիներն ապահովելու էին սպաներով, ռազմամթերքով, օժանդակելու էին փոքրաթիվ ցամաքային ու ծովային ուժերով: Հայերն ապստամբություն կազմակերպելու նպատակով զենք ու դրամ էին տեղափոխելու Կիլիկիայի ծովափնյա շրջանները: Ապա հայկական կամավորական բանակը գրավելու էր Ալեքսանդրետը, Ադանան, Մերսինը: Նախատեսվում էր, որ այնտեղ նրանց կմիանան 25.000 հայ ապստամբներ Կիլիկիայից և 15.000 էլ՝ շրջակայքից: Այդ 50.000-նոց բանակը բավարար էր համարվում ոչ միայն Կիլիկիան ազատագրելու, այլև շարժվելու նրա սահմաններից դուրս: Անհրաժեշտ էր գործողությունն իրականացնել արագորեն՝ կիլիկիահայությանը կոտորածներից ու տեղահանությունից փրկելու համար:

Եթե անգլիացիներն անհրաժեշտ համարեին ավելի փոքրամասշտաբ գործողություն, ապա կարելի էր հավաքագրել միայն 5.000 կամավորների: Այդ զորքը կարող էր մի կողմից գրավել Սուեսիան և Քեսաբը, ուր կային 25.000 հայեր, մյուս կողմից՝ Դյորթ Յոլը Ալեքսանդրետի ծոցում, ուր կհավաքվեին և արդյունա-

---

[11] *Նույն տեղում, թ. 69:*

[12] Boghos Nubar's Papers…, p. 164-165.

[13] *Նույն տեղում, էջ 194-195:*

[14] *Նույն տեղում, էջ 203-204:*

վետ դիմադրություն կկազմակերպեին շրջակայքի հայերը: Այդ երկու գործողությունների հաջողության դեպքում կարող էին գրավվել Ալեքսանդրետն ու Բեյլանի կիրճը: Անհաջողության դեպքում ուժերը կարող էին կենտրոնացվել լեռներում և պարտիզանական պայքար մղել: Նրանք կխախտեին թշնամու հաղորդակցությունը՝ կտրելով հեռագրալարերը, քանդելով երկաթգծերը, այրելով կամուրջները և այլն:

Այդ ծրագրերը, սակայն, ուշացած էին, և կիլիկիահայության տեղահանությունից հետո դրանք անիրագործելի դարձան: Չնայած անգլիական կողմը հավանություն էր տվել վերոնշյալ ծրագրերին, բայց հանդիպել էր Ֆրանսիայի դիմադրությանը, որը տարածաշրջանում ուներ այլ ծրագրեր: Հենց վերջինիս ցույց տված դիմադրությունն էր պատճառը, որ Կիլիկիայում ափհանում չկատարվեց, և երկրամասը չազատագրվեց թուրքերից, չնայած թե՛ անգլիացիները, թե՛ ռուսները դա համարում էին հնարավոր և անհրաժեշտ: Կիլիկիայի ուղղությամբ ռազմական որևէ նախաձեռնության նկատմամբ Ֆրանսիայի անզիջում դիրքորոշումն այն կարևոր գործոններից մեկը հանդիսացավ, որը, ի վերջո, հանգեցրեց Դարդանելի արկածախնդիր օպերացիան գործողության մեջ դնելուն:

Այդ ժամանակաշրջանի ֆրանսիական քաղաքականության մասին պատմաբան Ե. Գասպարյանը գրում է. «Կիլիկիայում՝ Ալեքսանդրետի շրջանում լայնամասշտաբ և ինքնուրույն ռազմական գործողություններ մղելու և իր ծավալապաշտական խնդիրներն իր իսկ բանակների ուժերով լուծելու անընդունակ Ֆրանսիան ոչ միայն պարբերաբար և հետևողականորեն մերժեց արևմտահայությանն օգնելու բոլոր խնդրանքներն ու պատմության ընձեռված հնարավորություններն, այլև, իր վրա վերցնելով հայոց ցեղասպանության մեջ մեղսակցության ու պատասխանատվության իր բաժին բեռը, այնքան ուժ, զորություն և կարողություն ունեցավ, որպեսզի հանուն իր ծավալապաշտական առաջնահերթ շահերի, շարունակ խանգարի, արգելի և ձախողի *ինչպես իր դաշնակիցների՝ Անգլիայի և Ռուսաստանի, այնպես էլ հայ ազգային-քաղաքական ղեկավար շրջանակների կողմից արված ռազմական ու դիվանագիտական բնույթի այն բոլոր հրավերներն ու առաջարկները, որոնց իրականացումը կարող էր, նախ, շատ բանով կանխել հայոց ցեղասպանության գործադրումը, և ապա էականորեն նվազեցնել արևմտահայության ողբերգության չափերն ու ընդգրկումները»*[15]*:*

Դեռևս 1915 թ. փետրվարի 7-ին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը Փարիզի ռուսական դեսպանությանն ուղղված գաղտնի հեռագրով տեղեկացնում էր, որ Կովկասյան բանակի շտաբ են ներկայացել զեյթունցի պատվիրակներ և ինքնապաշտպանության համար զենք են խնդրել, քանի որ Կիլիկիայում կոտորածների սպառնալիքը մեծացել էր: Փոխարքան կարևորում էր հարցի ռազմավարական նշանակությունը դաշնակիցների համար և անհրաժեշտ էր համարում անհապաղ պահանջված քանակությամբ հրացաններ և փամփուշտներ հասցնել Ալեքսանդրետի ծովածոցում սպասող հայերին: Նկատի առնելով այն հանգամանքը, որ Զեյթունի հայերի գործողություններն օգտակար կլինեին ֆրանսիացիներին, ելնելով նաև խնդրի անհետաձգելիությունից և այն փաստից,

---

[15] *Ե. Գ ա ս պ ա ր յ ա ն. Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918 թթ.), Երևան, 2000, էջ 81:*

որ ռուսները հնարավորություն չունեն անմիջապես հայերին տրամադրելու պահանջվող հրացանները, Վորոնցով-Դաշկովը անհրաժեշտ էր համարում կապվել ֆրանսիական կառավարության հետ և նշել, որ Ռուսաստանի համար ցանկալի է, որ ֆրանսիական ռազմանավերով Ալեքսանդրետ հասցվեր զենք ու զինամթերք[16]: Սակայն փետրվարի 14-ին Փարիզի դեսպան Ա. Իզվոլսկին Վորոնցով-Դաշկովին տեղեկացրեց, որ Ֆրանսիայի արտգործնախարար Թ. Դելկասեն մերժել է, նշելով, որ «ֆրանսիական կառավարությունը բացարձակապես զուրկ է Զեյթունի հայերին որևէ քանակությամբ հրացաններ տրամադրելու հնարավորությունից, քանի որ Ֆրանսիան՝ ինքը դրանց խիստ կարիքն ունի»[17]: Այսպիսով, Ֆրանսիան զլացավ որևէ օգնություն տրամադրել զեյթունցիներին՝ ինքնապաշտպանության համար:

1915 թ. փետրվար-մարտ ամիսներին Սոֆիայում Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի՝ դեսպանների հետ ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի անունից բանակցություններ սկսեց Մ. Վարանդյանը: Նա առաջարկում էր Ամերիկայում ու Բալկաններում հավաքագրել 15–20.000 հայ կամավորների, մարզել Կիպրոսում և այդ ուժերով ափհանում կատարել Կիլիկիայում: Չնայած դեսպանները հավանություն տվեցին այդ նախագծին ու ներկայացրին իրենց կառավարություններին, բայց Ֆրանսիան մերժեց նաև այդ ծրագիրը[18]: Նկատենք, որ մինչ այդ, 1914 թ. նոյեմբերին Ֆրանսիայի կառավարությանն էր դիմել Վերակազմյալ հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Վահե Արզույանը: Նա առաջարկել էր Ֆրանսիայի օգնությամբ հավաքագրել ու Կիպրոսում վարժեցնել հայ կամավորների: Ծախսերի մի մասը հոգալու էին ամերիկահայերը: Հայ կամավորները և որոշ թվով ֆրանսիացի զինվորներ ներխուժելու էին Կիլիկիա, ուր նրանց էին միանալու 10.000 հայեր: Այդ ուժերը, ըստ Վ. Արզույանի, բավարար էին Կիլիկիան ազատագրելու համար: Սակայն Ֆրանսիայի արտգործնախարար Դելկասեն մերժել էր այդ նախագիծը[19]: Երբ հնչակյանները նույն հարցով դիմել էին Անգլիայի կառավարությանը, ապա Ֆրանսիայի ԱԳՆ Արևելյան գործերի բաժնի պետ Ժ. Գուն անմիջապես զգուշացրել էր, որ իրենք դեմ են այլ պետության օգնությամբ Կիլիկիայում որևէ ապստամբություն ծրագրելուն[20]:

Դարդանելի օպերացիայի ձախողումից հետո Անգլիայի ռազմական նախարար Հ. Քիթչենները և Եգիպտոսում անգլիական զորքերի հրամանատար Ջ. Մաքսվելը նորից հակվեցին Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ ծավալելու գաղափարին: Նրանք փորձեցին այդ հարցում համաձայնության գալ ֆրանսիացիների հետ: Ալեքսանդրետում ափհանման անհրաժեշտության վերաբերյալ ռազմագիտական հիմնավորումներով 1915 թ. օգոստոսին Ֆրանսիայի կառավարությանը դիմեց ֆրանսիական բանակի Գլխավոր շտաբի պետ զորավար Սարան: Բայց այդ նախագծի դեմ հանդես եկան ֆրանսիական

---

[16] Նույն տեղում, էջ 39:

[17] Նույն տեղում, էջ 41:

[18] Նույն տեղում, էջ 39-41:

[19] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Չոպանյանի ֆ., բ. 1, ց. 1, գ. 702:

[20] Ա. Չ ո պ ա ն յ ա ն. Նամականի, Երևան, 1980, էջ 120-121:

բանակի գլխավոր հրամանատար Ժոֆրը, վարչապետ Ս. Վիվիանը և ռազմական նախարար Ա. Միլերանը[21]:

Ինչպես հայտնի է, 1915 թ. սեպտեմբերին հերոս մուսալեռցիները փրկվեցին ֆրանսիական նավատորմի կողմից և ապաստան գտան Պորտ Սայիդում: Նրանք բազմիցս դիմեցին անգլո-ֆրանսիական իշխանություններին, որպեսզի իրենց զենք տան և ուղարկեն կռվելու թուրքերի դեմ[22]: Արդեն սեպտեմբերի 17-ին Ֆրանսիայի արտգործնախարարը Կահիրեի դեսպան Ա. Դեֆրանսին հարցում կատարեց, թե կարող են մուսալեռցիներին զինվորագրել Արևելքի Օտար գումարտակի համար: Այդ ժամանակ քննարկվում էր Կիլիկիայում ափհանում կատարելու զորավար Սարայի ծրագիրը: Սեպտեմբերի 19-ին ֆրանսիական դեսպանը հեռագրով պատասխանեց, որ կարող են մուսալեռցիներից հավաքագրել 500 լավ պատրաստված զինվորներ: Նա տեղեկացրեց նաև, որ գեներալ Ջ. Մաքսվելը նախատեսում է հայկական լեգեոն կազմել և այն համալրել ամերիկահայ կամավորներով: Լեգեոնի խնդիրն էր լինելու հարձակումներ կատարել ծովեզերքում, հատկապես Ալեքսանդրետի շրջանում[23]:

Սեպտեմբերի 22-ին Դեֆրանսը արտգործնախարարին տեղեկացրեց, որ հայերը զենք ու զինամթերք են խնդրել թուրքերի դեմ կռվելու համար: Հայերը հայտնել են, որ գերադասում են գործակցել Ֆրանսիայի հետ, սակայն եթե Անգլիան պահանջի իրենց համագործակցությունը՝ չեն մերժի: Դեսպանը կարծում էր, որ հայերը լավ պարտիզաններ կլինեն, սակայն կասկածում էր հայերից կանոնավոր զորք պատրաստելու հնարավորությանը: Շուտով Մաքսվելը ևս ֆրանսիացիներին առաջարկեց հայերին զենք տալ և ուղարկել Կիլիկիայի լեռները, որպեսզի ապստամբություն բարձրացնեն: Նա առաջարկեց, որ Ֆրանսիան հայերի հարցը իր վրա վերցնի[24]: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Կիլիկիան գտնվում էր ֆրանսիական շահերի գոտում:

1915 թ. նոյեմբերի 2-ին Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատար ծովակալ Մորոն Ծովային նախարարին ուղարկած տեղեկագրում նշում էր, որ մուսալեռցիները քաջ ու կռվող ժողովուրդ են և առաջարկում էր նրանց զինել ու ուղարկել փոքր դիվերսիոն արշավանքների թուրքական երկաթուղիների վրա[25]: Այդ նպատակով ֆրանսիացի նավաստիները սկսեցին մարզել 250 մուսալեռցի կամավորների:

1915 թ. նոյեմբերի 13-ին Ֆրանսիայի կառավարությունը խորհրդակցություն հրավիրեց Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողությունների հարցը քննարկելու նպատակով, որի համար դիմել էին նաև անգլիացիները: Սակայն քննարկման արդյունքում որոշվեց, որ տվյալ պահին ձեռնտու չէ Կիլիկիայում ափհանում կատարելը, և այդ մասին տեղեկացրին անգլիական կառավարութ-

---

[21] Ե. Գ ա ս պ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 48-49:

[22] Ս. Պ ա ր թ և յ ա ն. Արարա: Հայկական լեգեոնը, Իզմիր, 1919, էջ 59-60:

[23] Ա. Կ ա ր ա մ ա ն ո ւ կ յ ա ն. Հայկական լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ և վավերագրեր, Բեյրութ, 1974, էջ 63:

[24] Նույն տեղում, էջ 64:

[25] Նույն տեղում, էջ 65-66:

յանը[26]: Այդ ժամանակ ֆրանսիացիները բավարար ուժեր չունեին Կիլիկիա ուղարկելու համար: Փաստորեն, Ալեքսանդրետի օպերացիայում հիմնական դերակատարությունը ստանձնելու էին անգլիացիները, և Ֆրանսիան վախենում էր, որ կարող է կորցնել Կիլիկիան, եթե այն գրավվի ոչ իր զորքերի կողմից:

Թե որքան արդյունավետ կլիներ Կիլիկիայում կատարելիք ափհանումը, կարելի է եզրակացնել ծանոթանալով գերմանացի ֆելդմարշալ Լ. Հինդենբուրգի տեսակետին. նա իր զարմանքն էր հայտնում, որ Անգլիան ու Ֆրանսիան չօգտվեցին այդ անպաշտպան օղակից և շարքից չհանեցին Գերմանիայի դաշնակից Թուրքիային: «Այսպես վարվելու դեպքում,– նշում է ֆելդմարշալը,– նրանք կկարողանային կտրել Թուրքիայի տրանստավրոսյան երակը, որի վրայով թուրքական ուժերը, հանդերձանքն ու սպառազինություններն ուղարկվում էին Սիրիա, Միջագետք և մասամբ Կովկասյան բանակներին»[27]: Թուրքիայի ռազմական նախարար Էնվերը ևս վախենում էր, որ հակառակորդները կարող են բացահայտել թուրքերի «թուլությունն այդ կրիտիկական կետում»[28]:

Ինչպես տեսնում ենք, Կիլիկիայում զորքերի ափհանում կատարելու և այնտեղ ռազմական հաջող գործողություններ ծավալելու հնարավորությունն Անտանտի երկրները բաց թողեցին: Դա պայմանավորված էր Մերձավոր Արևելքում անգլո-ֆրանսիական գաղտնի մրցակցությամբ: Ֆրանսիան ցանկանում էր պատերազմից հետո Կիլիկիան միացնել իր գաղութներին, սակայն այդ պահին Արևելքում բավարար զորք չուներ երկրամասը գրավելու համար: Ֆրանսիացիները խանդով էին վերաբերվում անգլիական ու հայկական ուժերով Կիլիկիան ազատագրելու ծրագրերին՝ վախենալով, որ կարող են այն կորցնել: Երկրամասը գրավելու Ֆրանսիայի անկարողությունը և Անգլիայի գրավման դեմ նրա հարուցած խոչընդոտները չափազանց ծանր հետևանքներ ունեցան հայերի համար: Անտանտի զորքերի ափհանումը Կիլիկիայում կարող էր տեղահանությունից ու կոտորածից փրկել ոչ միայն տեղի հայությանը, այլ նույնիսկ կանխել Մեծ եղեռնը: Անգլո-ֆրանսիական զորքերը Կիլիկիայից շարժվելով ռուսական բանակներին ընդառաջ՝ Թուրքիային կկանգնեցնեին երկու մասի բաժանվելու վտանգի առաջ և նրան կստիպեին դուրս գալ պատերազմից: Նման պայմաններում թուրքերն ի վիճակի չէին լինի կազմակերպել այնպիսի հրեշավոր ոճիր, ինչպիսին հայոց ցեղասպանությունն էր, իսկ եթե, այնուամենայնիվ, որոշեին հայկական կոտորածներ իրականացնել, ապա դրանք երբեք այն չափերն ու ահավորությունը չէին ունենա, ինչ եղավ: Ցավոք, մեր ժողովրդին ճակատագիրն այս անգամ ևս չժպտաց, և 1915 թ. Կիլիկիայի ազատագրման հարցը մնաց միայն թղթային նախագիծ, իսկ կիլիկիահայերը ստիպված էին անցնել Մեծ եղեռնի գողգոթայով:

ПЛАНЫ ОСВОБОЖДЕНИЯ КИЛИКИИ В 1915 Г.

---

[26] *Ե. Գ ա ս պ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 49:*

[27] *Ջ. Կ ի ր ա կ ո ս յ ա ն. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2, Երևան, 1983, էջ 68:*

[28] *Նույն տեղում:*

САМВЕЛ ПОГОСЯН

Р е з ю м е

В начале Первой мировой войны армянские политические деятели были озабочены тем, как спасти армянское население Киликии. Они предлагали правительствам Англии и Франции отправить десант в Киликию, выражая готовность принять войска союзников как освободителей. Армянские деятели даже предлагали создать армянскую дивизию на Кипре с помощью Англии и Франции и освободить Киликию только силами армян. Английские власти были согласны с этими предложениями, но Франция была против по некоторым политическим причинам и всеми средствами препятствовала этим планам. Державы Антанты, несмотря на все старания армянских деятелей, так и не высадили в Киликию экспедиционного корпуса. Присутствие военных сил Антанты могло бы предотвратить геноцид армян или же уменьшить его масштабы.

PLANS OF LIBERATION OF CILICIA IN 1915

SAMVEL POGHOSYAN

S u m m a r y

At the beginning of the World War I Armenian political and public figures thought how to save Armenian people of Cilicia. They offered the English and the French governments to send a descent to Cilicia. Armenians were ready to accept forces of allies as liberators and help them by all means. Armenian political and public figures even offered to form Armenian divisions at Cyprus with the help of England and France and to liberate Cilicia only by Armenian forces. The English powers agreed with these suggestions, but France was against them for some political reasons and prevented these plans by all means. If the Powers of Entante had sent expedition corps to Cilicia and liberated that land with the help of Armenians, it would be possible that the Armenian Genocide wouldn’t take place or it wouldn’t be of that scale.